

ՈՒՆՅՈՒՅՑ

ԱՊՐԱ ՈՒՐԻՉ ՀԱՏՈՒՄԱՆ ԳՈՐԾԵԱԿՑՈՒՄ ԱՆՁԱՆՑ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՎՏՈՂԱՅՐՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ
ԲՅՈՒՐՈ

1. Սույն ուղեցույցը նախատեսված է ԱԴԴԱ պատահարում ընդգրկված տուժողի, ապահովագրի և ապահովագրված անձի (ավտոմեքենայի սեփականատիրոջ կամ պատահարի ժամանակ այն օրինական հիմքով տիրապետած այլ անձի) համար, ովքեր այսուհետ ուղեցույցում անվանվում են Կողմեր: Ուղեցույցի նպատակն է Կողմերին հակիրճ ներկայացնել հատուցման գործընթացում ապահովագրական ընկերության կողմից ստացվող փաստաթղթերի և դրանց հետ կապված իրենց հնարավոր գործողությունների և իրավունքների վերաբերյալ:

2. Տուժողի կողմից ներկայացված հատուցման դիմումը կարգավորելիս ապահովագրական ընկերությունը Կողմերին պետք է ծանուցի հետևյալ փաստաթղթերն ու նյութերը՝



ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) որոշումը կամ դրա լուսապատճենը



պատահարում մեղավորության որոշման փորձագիտական եզրակացության պատճենը կամ լուսապատճենը՝ դրա համար հիմք հանդիսացող բոլոր ելակետային տվյալներով, կամ համապատասխան դատական ակտի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման պատճենը կամ լուսապատճենը



պատահարի հետևանքով տուժողի գույքին պատճառված վնասի փորձաքննության եզրակացության կամ համապատասխան դատական ակտի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման պատճենը կամ լուսապատճենը,



սույն ուղեցույցը կամ դրա էլեկտրոնային տարբերակը


3. Այն դեպքում, երբ ծանուցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ծանուցվող կողմն իրավունք ունի իրեն ծանուցած ապահովագրական ընկերությանը պահանջ ներկայացնել՝ պակասող փաստաթղթերը ստանալու համար:

4. Ծանուցվող անձանցից ցանկացածն իրավունք ունի անհամաձայնություն հայտնել պատահարի վերաբերյալ ծանուցված փաստաթղթերի վերաբերյալ եջ 4-ում նշված կարգով և ժամկետներում՝ համապատասխան բողոքարկում իրականացնելու միջոցով: Կրկնակի փորձաքննությունների անցկացման պայմանները սահմանված են ուղեցույցի եջ 5-ում:


5. Ապահովագրական հատուցումը կատարվում է գումարի վճարման կամ վնասված գույքի վերանորոգման միջոցով՝ ըստ տուժողի ընտրության (բացառությամբ այն դեպքերի, երբ վերանորոգումն ըստ Բյուրոյի կանոնների, հնարավոր չէ կամ ողջամիտ չէ, որի դեպքում հատուցումը կատարվում է գումարի վճարման միջոցով): Այն դեպքում, երբ հատուցման որոշման մասին փաթեթի ստացումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, տուժողը որևէ տարբերակ չի ընտրում և այդպիսի ընտրություն կատարած չի լինում նաև հատուցման ստացման դիմումում, ապա ապահովագրական ընկերությունը տուժողին հատուցումն իրականացնում է գումարի վճարման միջոցով: Վերանորոգման տարբերակի դեպքում վերանորոգումն իրականացվում է այն վերանորոգող կազմակերպությունում, որը նախատեսված է (նշված է) վնասների գնահատման փորձաքննության տվյալ եզրակացությունում:

6. Կողմերն իրենց բողոքները, հաստատումները և ցանկացած այլ հաղորդակցումները կարող են իրականացնել առձեռն՝ դրանք բողոքարկումն ընդունող կազմակերպության գլխամաս կամ մասնաճյուղի տարածք ներկայացնելու միջոցով (ներկայացնելով նաև անձը հաստատող փաստաթուղթը) կամ էլեկտրոնային եղանակով՝ ծանուցումը ստացած միևնույն էլեկտրոնային հասցեից այն էլեկտրոնային հասցեն պատասխանելու (ուղարկելու) միջոցով, որը նշված է որպես տվյալ ծանուցմանը հետպատասխանի հասցե (այսեղանակի կիրառման դեպքում ստորագրելու անհրաժեշտություն առկա չէ) կամ Բյուրոյի կանոններով նախատեսված այլ եղանակով:

7. Հատուցման գործընթացի ամբողջական կարգավորումների մանրամասների կարող եք ծանոթանալ Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում:



ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՅԿԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԿՃԱՐԻ ՉԱՓԸ



* Արժեքը նշված է փաթեթի ծանուցման օրվա դրությամբ: